

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

1

Թվարկված կենդանիներից որի՞ ձվարջիջը հարուստ չէ դեղնուցով.

- 1) աղավնու
- 2) բաղակտուցի
- 3) մողեսի
- 4) շան

2

Ո՞ր սնկերին է պատկանում մուկորը.

- 1) խմորասնկերին
- 2) մակարույծ սնկերին
- 3) գլխարկավոր սնկերին
- 4) բորբոսասնկերին

3

Որո՞նք են բարձրակարգ սպորավոր բույսեր.

- 1) ձիաճետերը
- 2) ծածկասերմերը
- 3) մերկասերմերը
- 4) զրիմուռները

4

Ի՞նչն է բնորոշ երկարքիլավոր բույսերի մեծամասնությանը.

- 1) սերմնամաշկի դժվար անջատումը
- 2) էնդոսպերմում պաշարանյութերի կուտակումը
- 3) ցողունում կամքիումի շերտի առկայությունը
- 4) տերևների աղեղնաջիղ ջղավորությունը

5

Ո՞ր որդն է պատկանում օղակավոր որդերի տիպին.

- 1) սպիտակ պլանարիան
- 2) ներեխսը
- 3) ասկարիդը
- 4) եզան երիզորդը

6

Զկան գլխուղեղի ո՞ր բաժնից են դուրս գալիս տեսողական նյարդերը.

- 1) ուղեղիկից
- 2) երկարավուն ուղեղից
- 3) միջակա ուղեղից
- 4) առջևի ուղեղից

7

Ինչի՞ն են նպաստում մարդու քթի խոռոչի լորձաթաղանթի արյունատար անոքները.

- 1) ներշնչվող օդի խոնավացմանը և մաքրմանը
- 2) ներշնչվող օդի խոնավացմանը
- 3) ներշնչվող օդի տաքացմանը
- 4) արտաշնչվող օդից հոտավետ նյութերի կլանմանը

8

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում արյան մեջ աղբենալինի քանակի ավելացման դեպքում.

- 1) լայնանում են արյունատար անոքները, սինթեզվում է մեծ քանակությամբ գլիկոզեն
- 2) սրտի աշխատանքը դանդաղում է, զլյուկոզի քանակն արյան մեջ՝ նվազում
- 3) արագանում է սրտի աշխատանքը, բարձրանում է արյան ճնշումը
- 4) արյան մեջ նվազում է զլյուկոզի քանակությունը

9

Ո՞ր գործընթացն է մարդու սիմպաթիկ նյարդային համակարգի դրդման արդյունք.

- 1) աղբենալինի արտադրման ճնշում
- 2) բիբերի նեղացում
- 3) անոքազարկի դանդաղում
- 4) ստամոքսահյութի արտադրման ճնշում

10

Մարդու մեծ կիսազնդերի կեղևի ո՞ր բլթերն է բաժանում կենտրոնական ակոսը.

- 1) ճակատային և զագարային
- 2) զագարային և ծոծրակային
- 3) քունքային և զագարային
- 4) ճակատային և քունքային

11

Մարդու ո՞ր անոքներով է հոտում երակային արյուն.

- 1) քոքային զարկերակներով և սիներակներով
- 2) քոքային զարկերակներով և երիկամներ մտնող անոքներով
- 3) քոքային երակներով և դուներակով
- 4) նեֆրոնի պատիճի առերող և արտատար անոքներով

12

Ի՞նչ միացություն չի պարունակում մարդու քուքը.

- 1) պեպսին
- 2) լիզոցիմ
- 3) մալթազ
- 4) պտիալին (ամիլազ)

13

Ո՞ր մարդու վերին վերջույթի կմախքի ուկոր չէ.

- 1) անրակոսկրը
- 2) կրծոսկրը
- 3) բազկոսկրը
- 4) թիակոսկրը

14

Ո՞ր տիպի իմունիտետն է ձևավորվում մարդու օրգանիզմում բուժիչ շիճուկ ներարկելիս.

- 1) արհեստական ակտիվ
- 2) արհեստական պասիվ
- 3) բնական ձեռքբերովի
- 4) բնական բնածին

15

Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին B₁-ի վերաբերյալ.

- 1) ջրալույծ է, ավիտամինովի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 2) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինովի դեպքում խթանվում է ռոդոպսինի սինթեզը
- 3) ավիտամինովի դեպքում զարգանում է բերի-բերի հիվանդությունը, ջրալույծ է
- 4) թերվիտամինովի կամ ավիտամինովի դեպքում զարգանում են մաշկի և լրձաթաղանթների խոցեր, ճարպալույծ է

16

Ինչի՞ է հանգեցնում մարդու օրգանիզմում քրտնարտադրության ուժեղացումը և մաշկի արյան անոթների լայնացումը.

- 1) արյան հոսքի արագացմանը
- 2) օրգանիզմի պաշտպանմանը գերտաքացումից
- 3) մարմնի ջերմաստիճանի բարձրացմանը
- 4) արյան ճնշման բարձրացմանը

17

Էռևարիուտ քջում որտե՞ղ է տեղի ունենում տրանսկրիպցիայի գործընթացը.

- 1) հատիկավոր էնդոպլազմային ցանցում
- 2) քջակորիզում
- 3) ոիբոսումներում
- 4) հարթ էնդոպլազմային ցանցում

18

Ո՞ր ածխաջուրն է պատկանում մոնոսախարիդներին.

- 1) թաղանթանյութը
- 2) խիտինը
- 3) գլյուկոզը
- 4) գլիկոզենը

19

Ինչո՞վ են միտոքոնոֆիումները և քլորոպլաստները տարրերվում կորիզից.

- 1) պարունակում են ΟՆԹ-
- 2) պարունակում են ΤՆԹ-
- 3) ունեն արտաքին և ներքին թաղանթներ
- 4) նրանցում տեղի է ունենում ԱԵՖ-ի սինթեզ

20

Քջում որտե՞ղ է կատարվում ոիբոսումների մեջ և փոքր մասնիկների
(ենթամիավորների) ձևավորումը.

- 1) քջակենտրոնում
- 2) Գոլցի ապարատում և էնդոպլազմային ցանցում
- 3) կորիզակում
- 4) միտոքոնոֆիումներում, քլորոպլաստներում և վակուոլներում

21

Որտե՞ղ են ձևավորվում լիզոսումները.

- 1) պլազմային թաղանթի վրա
- 2) ոիբոսումներում
- 3) միտոքոնոֆիումներում
- 4) Գոլցի ապարատում

22

Ո՞ր պրոցեսն է տեղի ունենում ինտերֆազի G₂ փուլում.

- 1) ցիտոկինեզը
- 2) քջային կենտրոնի ցենտրիոլների կրկնապատկումը
- 3) ΤՆԹ-ի կրկնապատկումը
- 4) հոմոլոզ քրոմոսումների տրամախաչումը

23

Ո՞րն է միտողի և մեյողի նմանությունը.

- 1) Երկու բաժանումների դեպքում էլ տեղի են ունենում կոնյուգացիա և կրոսինգովեր
- 2) Մեյողի երկրորդ բաժանման անաֆազում քջի բևեռներ են տեղափոխվում քրոմատիդները՝ ինչպես միտողի անաֆազում
- 3) Մեյողի առաջին բաժանման անաֆազում քջի բևեռներ են տեղափոխվում հոմոլոգ երկրորմատիդային քրոմոսոմները՝ ինչպես միտողի անաֆազում
- 4) Երկու բաժանումների արդյունքում էլ առաջանում են նույն թվով և քրոմոսոմային հավաքակազմով հավասար քջիջներ

24

Ինչպե՞ս է կոչվում առանց բեղմնավորման սաղմի և սերմի զարգացումը բույսերում.

- 1) հետսաղմնային զարգացում
- 2) վեգետատիվ բազմացում
- 3) անսեռ բազմացում
- 4) ապոմիքսիս

25

Ի՞նչ է գենոտիպը.

- 1) X քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը
- 2) օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը
- 3) սեռական քրոմոսոմներում գտնվող գեների ամբողջությունը
- 4) մեկ քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը

26

Ի՞նչ հարաբերություն է ստացվում հետերօգիզուտ առանձնյակների միահիբրիդ խաչասերման արդյունքում՝ ոչ լրիվ դոմինանտության դեպքում.

- 1) 1:2:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի և գենոտիպի
- 2) 3:1 ճեղքավորում՝ ըստ գենոտիպի
- 3) 3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 4) 1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի և գենոտիպի

27

Մարդու n^oր հիվանդության պատճառն է առևտոսումներում գտնվող մուտանտ ռեցեսիվ գենը.

- 1) Քլայնֆելտերի սինդրոմի
- 2) ալբինիզմի
- 3) Մարֆանի սինդրոմի
- 4) պոլիդակտիլիայի

28

Ինչպիսի՞ ֆենոտիպ կատացվի կանաչ սերմերով ոլոռի ինքնափոշոտման
արդյունքում.

- 1) 100% կանաչ սերմերով
- 2) 50 % կանաչ և 50% դեղին սերմերով
- 3) 25 % կանաչ և 75% դեղին սերմերով
- 4) 75 % կանաչ և 25% դեղին սերմերով

29

Ո՞ր կենդանիներին է բնորոշ արական հետերոզամետությունը.

- 1) պոչավոր երկկենցաղներին
- 2) բոչուններին
- 3) սողուններին
- 4) կաթնասուններին

30

Ինչպե՞ս են անվանում այն փոփոխությունները, որոնք չեն ժառանգվում և
օնտոգենեզի ընթացքում ձեռք են բերվում որպես հարմարանքներ.

- 1) համակցական
- 2) անորոշ
- 3) մուտացիոն
- 4) մոդիֆիկացիոն

31

Առանձնյակներին մեկ պոպուլյացիայի մեջ միավորող գործոններից ո՞րն է գլխավորը.

- 1) ընդհանուր թշնամիների առկայությունը
- 2) սեռահասուն և ոչ սեռահասուն առանձնյակների փոխհարաբերությունները
- 3) ժամանակի ընթացքում առանձնյակների միմյանց նմանվելը
- 4) ազատ խաչասերման հնարավորությունը

32

Ո՞րն է արոմորֆոզ.

- 1) միմիկրիան
- 2) նախազգուշացնող գունավորումը
- 3) հովանավորող գունավորումը
- 4) ֆոտոսինթեզը

33

Տեսակների միջև գործող ո՞ր փոխհարաբերությունն է օգտակար միայն մեկ տեսակի համար.

- 1) ամենսալիզմը
- 2) կոռպերացիան
- 3) կոմենսալիզմը
- 4) մուտուալիզմը

34

Էկոլոգիական գործոններից ո՞րն է կենսածին.

- 1) միջատներով բույսերի փոշոտումը
- 2) օրվա տևողությունը
- 3) քամու արագությունը
- 4) ջրի քիմիական կազմությունը

35

Ո՞րն է էկոհամակարգերի երկրորդային արտադրանքը.

- 1) Էկոհամակարգը կազմող բոլոր կենդանի օրգանիզմների գումարային զանգվածը
- 2) պրոդրոցենտրների կենսագանգվածի աճը միավոր ժամանակում
- 3) ուղղուցենտրների և պրոդրոցենտրների կենսագանգվածի ավելացման արագությունը
- 4) կոնսումենտների կենսագանգվածի ավելացման արագությունը

36

Ի՞նչն է բնորոշ ազրուկության ակտուալարգերին.

- 1) դոմինանտ տեսակները բնական ընտրության արդյունք են
- 2) օժտված են ինքնակարգավորմանը
- 3) լրացուցիչ էներգիայի կարիք չունեն
- 4) խախտված է բնական հավասարակշռությունը

(37-38) Արտի բոլորաշրջանը տևում է 0,8 վայրկյան: Առողջ մարդու հարաբերական հաճախատի վիճակում գտնվող սրտի փորոքների կծկման տևողությունը 120 վայրկյան է:

37

Որքա՞ն է սրտի աշխատանքի տևողությունն (վրկ) այդ ընթացքում.

- 1) 200
- 2) 320
- 3) 120
- 4) 40

38

Քանի՞ վայրկյան է նախասրտերի քուլացումն այդ ընթացքում.

- 1) 200
- 2) 40
- 3) 280
- 4) 120

(39-40) Ծագանակագույն աչքերով աջիկ տղամարդու և երկնագույն աչքերով ձախիկ կնոց ամուսնությունից ծնվեց մոր ֆենոտիպով երեխա: Ծագանակագույն աչքերը և աջիկությունը պայմանավորող գեները դոմինանտում են համապատասխանաբար երկնագույն աչքերի և ձախիկության գեների նկատմամբ և ժառանգվում են որպես առոտոսոնային շղթայակցված հատկանիշներ:

39

Որքա՞ն է շագանակագույն աչքերով աջիկ երեխա ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում.

- 1) 1/2
- 2) 1/4
- 3) 1/16
- 4) 1/8

40

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի տղամարդը.

- 1) Aabb
- 2) AABb
- 3) AaBB
- 4) AaBb

41

Փոփոխականության ո՞ր ձևին (նշված է աջ սյունակում) ո՞ր օրինակն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրինակ

- A. Քիզիկական մեծ քեռնվածությունների ժամանակ մկանների զանգվածի աճ
- B. Առկլեռտիղների մեկ զույգի փոխարինում
- C. հապլոիդիա
- D. պոլիպետիդային շղթայի ամինաքրվի փոխարինում
- E. քեղմնավորման ժամանակ զամետների պատհական զուգակցում
- F. աշնանը տերևների գույնի փոփոխություն
- G. սրբառմիա

Փոփոխականության ձև

- 1. գենոմային մուտացիա
- 2. համակցական փոփոխականություն
- 3. ֆենոտիպային փոփոխականություն
- 4. գենային մուտացիա

42

Գտնել միջատի քերանային ապարատի տիպի (նշված է աջ սյունակում) և հասուն միջատի (նշված է ձախ սյունակում) համապատասխանությունը: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հասուն միջատ

- A. փայտողիլ
- B. թիթեռ
- C. խավարասեր
- D. մոծակ
- E. ծղրիդ
- F. ճպուռ
- G. մեղու

Քերանային ապարատի տիպ

- 1. կրծող
- 2. կրծող-ծծող
- 3. ծակող-ծծող
- 4. ծծող

43

Մարդու մեզի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

Մեզի տեսակ

- | | |
|---|----------------|
| A. լցնում է երիկամի ավագանը | 1. առաջնային |
| B. առաջանում է հետադարձ ներծծման
արդյունքում | 2. երկրորդային |
| C. լցնում է նեֆրոնի պատիճը | |
| D. առաջանում է ֆիլտրման եղանակով | |
| E. օրվա ընթացքում առաջանում է 150-170 լ | |
| F. հոսում է հավաքող խողովակով | |
| G. բաղադրությամբ մոտ է արյան պլազմային | |

44

Ի՞նչ համապատասխանություն կա սաղմնային թերթիկի (նշված է աջ սյունակում) և նրանից զարգացող հյուսվածքի, օրգանի (նշված է ձախ սյունակում) միջև: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Հյուսվածք, օրգան

Սաղմնային թերթիկ

- | | |
|-----------------------|-------------|
| A. աղիքի էպիթել | 1. Էկտոդերմ |
| B. նյարդային համակարգ | 2. մեզոդերմ |
| C. խոիկների էպիթել | 3. էնտոդերմ |
| D. բոքերի էպիթել | |
| E. ոսկրային հյուսվածք | |
| F. մաշկի էպիթել | |
| G. ատամների էմալ | |
| H. մկանային հյուսվածք | |

45

Մարդու օրգանիզմի կառուցվածքի ո՞ր առանձնահատկությանը (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ո՞ր ապացույցն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կառուցվածքի առանձնահատկություն

Ապացույց

- A. մաշկային մկաններ
- B. պոչի առկայություն
- C. կույր աղիքի որդանման ելուստ
- D. պոչուկ
- E. դեմքի խիտ մազածածկույթ
- F. լրացուցիչ պտուկներ
- G. երրորդ կոպի մնացորդ

- 1. ռուդիմենտ
- 2. ատավիզմ

46

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները ծաղկավոր բույսերի սեռական բազմացման ժամանակ: Նշել ճիշտ հերթականությունը.

- 1. փոշեխողվակի առաջացում
- 2. սերմի առաջացում
- 3. սպերմիումի և ձվարջի միաձուլում
- 4. միկրոսպորի առաջացում
- 5. փոշեխողվակի ներթափանցում սաղմնապարկ
- 6. գեներատիվ և վեգետատիվ բջիջների առաջացում
- 7. փոշոտում

47

Նշել սերմնարանում գամետների առաջացման ժամանակ պրոցեսների ճիշտ հաջորդականությունը:

- 1. տրամախաչում
- 2. հոմոլոգ քրոմոսոմների տարամիտում
- 3. առաջին կարգի սպերմատոցիտների առաջացում
- 4. դիպլոիդ բջիջների բաժանում՝ դիպլոիդ բջիջների առաջացմամբ
- 5. երկու հալլոիդ բջիջների առաջացում
- 6. սպերմատոզոֆիլների ձևավորում

48

Նշել գորտի օրգանիզմ ողի անցման և հեռացման միջև ընկած ժամանակահատվածում իրականացվող գործընթացների ճիշտ հաջորդականությունը.

1. ողը թոքերից դուրս է գալիս մարմնի պատերի և ներքին օրգանների մկանների կծկման շնորհիվ
2. ողը քթանցքերով անցնում է բերանակլանային խոռոչ
3. ողը մղվում է դեպի թոքերը
4. բերանակլանային խոռոչում ստեղծվում է նոսրացած տարածություն
5. փակվում են քթանցքերի փականները
6. բերանակլանային խոռոչի հատակը բարձրանում է
7. բերանակլանային խոռոչի հատակն իջնում է

49

Նշել պայմանական ռեֆլեքսի ձևավորման վիուերի ճիշտ հաջորդականությունը:

1. ամրապնդում
2. ժամանակավոր կապի առաջացում
3. ոչ պայմանական ռեֆլեքսի գրգռիչի և անտարբեր գրգռիչի զուգակցում
4. պայմանական ռեֆլեքսի դրսնորում
5. անտարբեր գրգռիչի վերածում պայմանական գրգռիչի

50

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում:

1. արյունատար անորի պատի վնասում
2. թրոմբի առաջացում
3. ֆիբրինոգենի բնափոխում
4. թրոմբոցիտների քայլայում
5. ֆիբրինի առաջացում
6. թրոմբոցիտների հպում արյունատար անորի անհարթ մակերևույթին
7. արյան պլազմայի մեջ թրոմբինի արտազատում

51

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու տեսողական վերլուծիչի գործառույթի իրականացման ժամանակ:

1. ցանցաքաղաքանի ընկալչական բջիջների գրգռում
2. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսազնդերի կեղև
3. լույսի ճառագայթների բեկում ակնաբյուրեղով անցնելիս
4. լույսի ճառագայթների անցում աչքի խցիկների հեղուկով
5. լույսի ճառագայթների արտացոլում առարկայի մակերևույթից
6. լույսի ճառագայթների անցում եղջերաքաղաքով
7. տեսողական զգայության ձևավորում

52

Նշել կենդանական օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ պրոցեսների ճիշտ հաջորդականությունը.

1. սպիտակուցիների ներմուծում օրգանիզմ
2. պեպտիդային կապերի առաջացում
3. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի քայլայում
4. ջրածնային կապերի առաջացում
5. ամինաթրուների ներմուծում բջիջ
6. պեպտիդային կապերի քայլայում
7. սպիտակուցի տարածական կառուցվածքի խախտում
8. ջրածնային կապերի քայլայում
9. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի առաջացում

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. մակարույծ ինֆուզորիաներից է բալանտիդիումը
2. հողաբաֆիկ ինֆուզորիան շարժվում է կեղծ ոտքերի միջոցով
3. հողաբաֆիկ ինֆուզորիայի բջջաբերանին հաջորդում է բջջակլանը
4. սննդի չմարսված մնացորդները հողաբաֆիկ ինֆուզորիայի մարմնից դուրս են գալիս արտազատող անցքով
5. հողաբաֆիկ ինֆուզորիան բազմանում է անսեռ եղանակով, որի ժամանակ տեղի է ունենում կոնյուգացիա
6. հողաբաֆիկ ինֆուզորիայի բազմացման ընթացքում կարևոր դեր է կատարում փոքր կորիզը

54

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- բակտերիաների ԴՆԹ-ն սպիտակուցների մոլեկուլների հետ համալիրներ է առաջացնում
- նիտրիֆիկացնող բակտերիաների մի խումբն օգտագործում է ազոտային թքուն ազոտական թքվի օքսիդացնելու ժամանակ անջատվող էներգիան
- կապտականաչ ջրիմուշները որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պատճառով դրանց ֆոտոսինթեզն ուղեկցվում է թքվածնի կլանումով
- բակտերիաներում ֆոտոսինթետիկ գունակները հաճախ կապված են լինում պլազմային բաղանթին
- կապտականաչ ջրիմուշներն ունեն քլորոպլաստներ, և ֆոտոսինթեզի ընթացքում ջրի մոլեկուլներն ենթարկվում են ֆոտոլիզի
- բակտերիաների բջջապատր կազմված է սպիտակուցներից և ածխաջրերից, հանդիպում են նաև լիալիդներ
- կապտականաչ ջրիմուշները բազմանում են երկու մասի կիսվելով

55

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

- ստամոքսում տարբերում են օղակադիր, երկայնակի, թեք մկաններ
- աղաքրուն և աղիքահյութը ստեղծում են թքվային միջավայր, որն ակտիվացնում է աղիներում գործող մարսողական ֆերմենտները
- հաստ աղու մանրէների ազդեցության տակ մարսվում են դեռևս չմարսված բուսական, մասամբ նաև կենդանական ծագում ունեցող ճարպերը և բարդ ածխաջրերը
- կլլման ընթացքում մարսողական ուղու մուտքը փակվում է մակուլորդով
- ըմպանը մկանային օրգան է, որի պատերին գտնվում են լսողական փողերի անցքերը, որոնք կապում են ըմպանը միջին ականջի խոռոչի հետ
- բարակ աղիները բաժանվում են երեք մասի՝ տասներկումատնյա աղի, զստաղի և խթաղի
- ենթաստամոքսային գեղձի գլյուկազոն հորմոնն արյան մեջ գլյուկոզի հավելյալ քանակը դարձնում է գլիկոզեն

Նշել բոլոր սխալ պնդումները.

- Երկիետերոգիզուտ առանձնյակների խաչասերման արդյունքում, զույգ ալելների ոչ լրիվ դոմինանտուրյան և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է գենոտիպային և ֆենոտիպային խմբերի հավասար քանակ
- Մենդելի առաջին օրենքը գեների անկախ բաշխման օրենքն է
- Aabb գենոտիպով առանձնյակները կառաջացնեն 2 տիպի գամետներ
- ծորիդի, սենյակային ճանճի, աղավնու, փայտոցիլի արուների սոմատիկ բջիջներն ունեն մեկ սեռական քրոմոսոմ
- կատուների մարմնի զունավորումը X քրոմոսոմին շղթայակցված հատկանիշ է
- համաձայն Թ. Մորգանի օրենքի՝ պտղաճանճի երկիետերոգիզուտ էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում սերնդում ստացվում է չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

- սեղանաձև մկանը կծկվում է թիակներն իրար մոտեցնելիս և գլուխը դեպի հետ թեքելիս
- կրծքավանդակի ոսկրերը միացած են միմյանց շարժուն, կիսաշարժուն միացումներով
- գոտկային և սրբանային ողերի սերտաճումը նպաստում է հենարանային գործառույթի իրականացմանը
- ողնաշարի կրծքային բաժնի ողի ելուստները դուրս են գալիս աղեղից
- սրբոսկրի ողերը ձևավորում են կիսաշարժուն միացումներ
- ձկնամկանը տեղակայված է բազկային հողի վերևում

Նշել բոլոր սխալ պնդումները.

- ալոպատրիկ տեսակառաջացումը նոր տեսակի ծագումն է նախկին արեալի ներսում
- սարացենիան գիշատիչ բույս է
- կենսացենոզով գրաղեցված տարածքն իրեն բնորոշ պայմանների և գործոնների հետ միասին կոչվում է բիոտոպ
- կոնսումենտներին բնորոշ է սնուցման հետերոտրոֆ եղանակը
- լրված դաշտի տարածքում լայնատերև անտառի վերականգնումը հանդիսանում է առաջնային սուկցեսիայի օրինակ
- կենսածին նյութն իր մեջ ներառում է օվկիանոսի ջրերը, հողը, կրային ապարները, քարածուխը

59

Տարվա ընթացքում արեգակնային ճառագայթման էներգիայի հոսքը մարզագետին կազմել է $8 \cdot 10^{10}$ կՋ/հա: Մեկ հեկտար մարզագետինի վրա մեկ տարվա ընթացքում աճում է 20000 կգ խոտ: Առաջնային արտադրանքի յուրաքանչյուր 1 գ-ում կուտակվում է մոտ 30 կՋ: Արեգակնային էներգիայի քանի^o տոկոսն է յուրացնում մարզագետինը: Պատասխանը բազմապատկել 100-ով:

60

Քանի^o լիտր թթվածին է յուրացվել մարդու օրգանիզմում 8 ժամ տևողությամբ աշխատանքի ընթացքում, եթե աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագանում են 1,5 անգամ, շնչառական ծավալն աճում է 1,6 անգամ, իսկ յուրացվող թթվածնի ծավալն ավելանում է 25 %-ով: Ընդունել, որ մարդը հարաբերական հաճախտի վիճակում արթուն ժամանակ 1 րոպեում կատարում է 20 շնչառական շարժում:

(61-62) Ֆուտոսինթեզի պրոցեսում կլանվել է 88 կգ CO₂: 1 մոլ զազր գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ:

61

Զանի՞ լիտր բրվածին է արտադրվել այդ ընթացքում:

62

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

(63-64) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածում U/Q քանակական հարաբերությունը հավասար է 2,1-ի:

63

Քանի՞ նուկլեոտիդներից է կազմված տվյալ հատվածը, եթե դրանում գուանինային մնացորդների քանակը հավասար է 2400-ի:

64

Քանի՞ ամինաթթվից կազմված սպիտակուց է կողավորում ԴՆԹ-ի այդ հատվածը:

- (65-66) Զերմահաղորդմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 15%-ը, իսկ գոլորշիացումով՝ զերմության 20%-ը: Մարմնի մակերեսը 2 մ² է, որից գոլորշիացել է 400 գրամ քրտինք:

65

Քանի՞ Չոռվ էներգիա է հեռացել մաշկի 1 մմ² մակերևույթից քրտինքի գոլորշիացման հետևանքով, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա:

66

Քանի՞ կՋ էներգիա է հեռացել օրգանիզմից զերմահաղորդմամբ:

(67-68) Օրգանիկում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացել է 36 մոլ CO_2 և 270 մոլ H_2O : 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաթթու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

67

Քանի՞ կՋոուլ է կազմել էներգիայի կորուստը անթթվածին փուլում:

68

Քանի՞ կՋոուլ է կազմել էներգիայի կորուստը բթվածնային փուլում:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. օդի առավելագույն քանակը, որը կարելի է արտաշնչել ամենախորը ներշնչումից հետո, կոչվում է թոքերի կենսական տարրողություն
2. թոքամզի թոքային թաղանթը պատում է կրծքավանդակի պատերը ներսից
3. կրծքավանդակի խոռոչի ծավալը մեծանում է, եթե մթնոլորտային օդը թափանցում է թոքեր
4. թոքերը պատված են հարթ մկանային հյուսվածքի երկշերտ թաղանթով, որոնք նպաստում են թոքերի կծկմանը և ընդարձակմանը
5. շնչառական ծավալն օդի այն ծավալն է, որը թոքեր է անցնում մեկ հանգիստ ներշնչման ժամանակ
6. աջ թոքը կազմված է երեք բլթերից, ձախը՝ երկու

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսը նման է սնամեջ գլանի, որի պատը կազմված է սպիտակուցի մոլեկուլներից, իսկ ներսում տեղափորված է Ռ-ՆԹ-ի մեկ մոլեկուլ
2. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասնիկը գնդիկային տեսքով կառույց է, իսկ ծխախոտի նեկրոզի վիրուսը ձողածն է
3. ֆազերն այնպիսի վիրուսներ են, որոնք բնակվում և բազմանում են բույսերի բջիջներում
4. այն երևույթը, երբ բջջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է բջիջը այլ վիրուսի ներթափանցումից, կոչվում է ինտերֆերենսիա
5. աղիքային ցուպիկի T4 բակտերիաֆազի մարմինը կազմված է Ռ-ՆԹ-ի մեկ մոլեկուլ պարունակող գլխիկից, պոչիկից և մի քանի պոչային ելուններից
6. հեպատիտը, անգինան, սիֆիլիսը, թոքախտը, սիրիուստը, էնցեֆալիտը վիրուսային հիվանդություններ են